

**ՀԱԷԿ» ՓԲԸ-ը գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյանի  
2023թ. հոկտեմբերի 23-ից 28-ը ք. Աբու Դաբի (Արաբական Միացյալ Էմիրություններ)  
գործուղման հաշվետվություն**

**Գործուղման նպատակը**

Շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցիացիայի Ռազմավարության, կառավարման և նշանակումների կոմիտեի (այսուհետ՝ ՇԿՀԱ ՌԿՆ կոմիտե) նիստին մասնակցություն

**Գործուղման նկարագիրը և արդյունքները**

Ս/թ հոկտեմբերի 23-ին և 24-ին ՇԿՀԱ Մոսկովյան կենտրոնի պատվիրակությունը՝ ի դեմս ինձ, ՇԿՀԱ ՄԿ տնօրեն Վ. Ակսյոնովի և ՄԿ Կառավարիչների խորհրդի անդամների, Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի կողմերի 28-րդ կոնֆերանսի (COP-28) երկշաբաթյա միջոցառումներին նախապատրաստվելու շրջանակում տարածաշրջանային մյուս կենտրոնների ներկայացուցիչների հետ մասնակցել է 28-րդ կոնֆերանսի նախագահ Սուլթան Ահմեդ Ալ Ջաբերի հրապարակած նամակի քննարկմանը:

Նամակում նախանշվել է COP-28-ի հիմնական նպատակը՝ ակտիվացնել գործողությունները՝ Փարիզյան համաձայնագրի որոշման իրականացման ուղղությամբ, որը վերաբերում է մինչև 2100 թվականը գլոբալ ջերմաստիճանի՝ նախաարդյունաբերական մակարդակից ոչ ավել, քան 1,5°C-ով բարձրացման սահմանափակմանը: Որպես այս նպատակին հասնելու մեխանիզմ՝ նամակում առաջարկվում է 2019 թվականի համեմատ 43%-ով կրճատել գլոբալ արտանետումները և մինչև 2050 թվականը հասնել զրոյական մակարդակի, ինչի համար անհրաժեշտ է եռապատկել էներգիայի վերականգնվող աղբյուրների համաշխարհային հզորությունը (մինչև 2030 թվականը 11ՏՎտ հասցնելը) և ներկա պահից մինչև 2030 թվականը կրկնապատկել էներգաարդյունավետության բարձրացման տարեկան միջին գլոբալ տեմպերը (մինչև 4%):

Ս/թ հոկտեմբերի 25-ին և 26-ին անցկացվել է ՇԿՀԱ Ռազմավարության, կառավարման և նշանակումների կոմիտեի պաշտոնական նիստը, որին ներկա են գտնվել ՇԿՀ ասոցիացիայի ղեկավարները և տարածաշրջանային 5 կենտրոնների նախագահները: Նիստը կազմակերպվել էր՝ համաձայն առաջարկված ծրագրի՝

1. Նիստի բացում և մասնակիցների ներկայացում
2. ՇԿՀԱ անդամակցության հարցերի ընդհանուր նկարագիր
3. 2024 թվականին ՇԿՀԱ նշանակումների և պարզևատրումների ընթացակարգ
4. ՇԿՀԱ ղեկավարության գործունեությունը՝ նոր անդամների ներգրավման և նրանց աջակցության հարցում

Փակ նիստի ընթացքում (միայն կոմիտեի անդամների մասնակցությամբ)

5. «Առանց արտանետումների մաքուր ատոմային էներգետիկա» նախաձեռնության ներկայացումը COP-28 կոնֆերանսի ընթացքում:

Ծրագրի երկրորդ կետի համաձայն՝ կազմակերպվել է քննարկում՝ ՇԿՀԱ Կառավարիչների խորհրդի նախագահ Թոմ Միթչելի ելույթի թեմաների շուրջ: Քննարկվել են զեկուցողի բարձրացրած բոլոր 19 խնդրահարույց հարցերի լուծմանն ուղղված հնարավոր մոտեցումները:

Ծրագրի երրորդ կետի համաձայն՝ առաջարկվել են ներքոնշյալ փոփոխությունները, որոնք ճանաչվել են հիմնավորված:

- Թեկնածուների ընտրությունն ապահովում են տարածաշրջանային կենտրոնների նախագահները,
- Թեկնածուների թիվը կրճատվել է մինչև 5 (1-ական թեկնածու յուրաքանչյուր տարածաշրջանային կենտրոնից)
- Ընտրության չափանիշներին թեկնածուների համապատասխանության գնահատականն իրականացնում է Լոնդոնյան գրասենյակը:

Ծրագրի չորրորդ կետի վերաբերյալ տեղեկատվության մեջ ներկայացված է ատոմային էներգետիկայի օբյեկտների կառուցման նախագծեր իրականացրած/իրականացնող նոր անդամ-երկրների՝ ՇԿՀԱ-ին անդամակցելու ոչ բավարար մոտիվացիան: Անհրաժեշտ է առավել արդյունավետ ցույց տալ ՇԿՀԱ-ի արժեքավոր դերը՝ էներգաբլոկների անվտանգ շահագործման և շահագործման ժամկետի օպտիմալացման ապահովման հարցերում:

Կապված գնաճի և ծախսերի զգալի աճի հետ՝ Թ. Միթչելի կողմից առաջարկվել է վերանայել և քվեարկել Լոնդոնյան գրասենյակի ֆինանսավորման ավելացման հարցը:

Լսվել են նաև տարածաշրջանային 5 կենտրոնների հաշվետվությունները՝ անցկացված գործընկերային ստուգումների և «Կատարելության կուրս» նախաձեռնության վերաբերյալ:

Ծրագրի հինգերորդ կետը քննարկվել է փակ նիստով (միայն կոմիտեի անդամների մասնակցությամբ):

Առավել բարդ, լուրջ ներդրումներ և համակարգման ջանքեր պահանջող են գնահատվել այն հարցերը, որոնք կապված են «Առանց արտանետումների մաքուր ատոմային էներգետիկայի» ինտենսիվ զարգացման ծրագրերի իրականացման հետ:

«Առանց արտանետումների մաքուր ատոմային էներգետիկա» նախաձեռնությունը Արաբական Միացյալ Էմիրությունների Միջուկային էներգիայի կորպորացիայի և Միջուկային համաշխարհային ասոցիացիայի համատեղ նախաձեռնությունն է, որի նպատակն է եռապատկել միջուկային էներգետիկայի գլոբալ հզորությունը՝ մինչև 2050 թվականը համաշխարհային ածխածնային չեղոքությանը հասնելու նպատակով:

Գիտակցելով այս նախաձեռնության առանձնահատուկ նշանակությունը և իրականացման բարդությունը՝ վերջինիս հեղինակները՝ ԱՄԷ Միջուկային էներգիայի կորպորացիայի կառավարող տնօրեն Մոհամմեդ Ալ Համմադին և Համաշխարհային միջուկային ասոցիացիայի գլխավոր տնօրեն Սամա Բիբաու-Լեոնը, նամակով դիմել են ՇԿՀԱ Կառավարիչների խորհրդի նախագահ Թոմ Միթչելին՝ նշված հարցում ջանքերը միավորելու և COP-28 միջոցառումների ընթացքում այն ավելի արդյունավետ ներկայացնելու առաջարկով:

Ընդ որում, պետք է հաշվի առնել այն փաստը, որ վերջին տարիներին ատոմային էներգետիկայի ինտենսիվ զարգացումը մեծ մասամբ ապահովվում է զարգացող երկրների կողմից, որոնք տվյալ ուղղության մեջ բավարար ակտիվության համար բավարար միջոցներ չունեն:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընթացքում հայտարարվել է գլոբալ տաքացմանը հակազդելու հարցերում խոստումներից և ծրագրերից իրական գործողությունների անցնելու անհրաժեշտության մասին: Այս բնագավառում մեծ հույսեր են կապվում Նոր Դելիում «մեծ քսանյակի» հայտարարության հետ՝ Փարիզյան համաձայնագրի բոլոր հիմնական դրույթներին ուղղված գործողությունների կարևորության և առաջնահերթության վերաբերյալ, և կլիմայական փոփոխությունների առումով առավել խոցելի երկրներին օպերատիվ ծավալներով ֆինանսավորելու մեխանիզմներով օժտված հատուկ ֆոնդ ստեղծելու ու գործարկելու նպատակով զարգացած երկրների կողմից 100 մլրդ դոլար հատկացնելու որոշման վրա:

Օգտագործելով COP-28 հարթակը, ուր սպասվում են առավել զարգացած տասնյակ երկրներից ավելի քան 6500 պատվիրակներ՝ կարելի է ակնկալել «Առանց

արտանետումների մաքուր ատոմային էներգետիկա» նախաձեռնության իրականացման մեկնարկային ազդակ:

Հոկտեմբերի 27-ին կազմակերպվել է ընդհանուր շրջայց՝ Բարակայի ԱԷԿ:

Ծանոթագրություն՝ 2009թ. դեկտեմբերին Korea Electric Power Corp ընկերության գլխավորած հարավկորեական կոնսորցիումը հաղթող է ճանաչվել ԱՄԷ-ում նոր և առայժմ միակ Բարակայի ԱԷԿ-ի (4 էներգաբլոկ՝ յուրաքանչյուրը PWR APR-1400 հզորությամբ ռեակտորով) կառուցման նպատակով կապալառուի ընտրության մրցույթում: Յուրաքանչյուր բլոկի շահագործման ժամկետը սահմանված է 60 տարի: Առաջին բլոկի շինարարությունը սկսվել է 2012թ. հուլիսի 18-ին: Մյուս բլոկների աշխատանքներն սկսվել են մոտ 1-ական տարվա տարբերությամբ: Ներկայումս 3 էներգաբլոկները գտնվում են շահագործման մեջ՝ համապատասխանաբար 2020, 2021 և 2022 թվականներից: 4-րդ էներգաբլոկի ցանցին միանալը նախատեսվում է 2024թ.

Տեխնիկական շրջայցի մասնակիցները հնարավորություն են ունեցել ծանոթանալու նշված նախագծի էներգաբլոկների շահագործման առանձնահատկություններին, ինչպես նաև անմիջական շփվելու ատոմակայանի անձնակազմի հետ՝ ՀԱԷԿ-ի և Բարակայի ԱԷԿ-ի միջև իրական նախագծային, դասավորվածքային և կոնստրուկտորական տարբերությունների վերաբերյալ առանձին հարցերի հստակեցման նպատակով:

Հոկտեմբերի 28-ին գործուղման անհատական ծրագրի ավարտից հետո վերադարձել են Հայաստան և անցել իմ աշխատանքային պարտականությունների կատարմանը:

Գլխավոր տնօրեն



Է. Մարտիրոսյան